ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2025թ. **N-----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների Լենինգրադյան փողոցը (սկսվում է Հրազդանի մեծ կամրջից, հասնում Սեբաստիայի և Գ. Հասրաթյան փողոցների խաչմերուկ) անվանափոխել բարերար Քըրք Քըրքորյանի անվամբ՝ « Քըրք Քըրքորյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄՀԵՐ ԲԵՋԱՆՅԱՆ

ՀԱՅԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ԳՈՀԱՐ ԲԱԼԴՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ՂԱՐԴՅԱՆ

ԼԻՆԱ ՂՇՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Քըրք Քըրքորյանը ծնվել է 1917 թվականի հունիսի 6-ին, Կալիֆոռնիայի Ֆրեզնո քաղաքում՝ հայկական արմատներով ընտանիքում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է որպես ռազմաօդային ուժերի օդաչու: Պատերազմից հետո սկսել է բիզնես գործունեություն՝ հատկապես օդաչուական ծառայությունների, ապա նաև հյուրանոցային և խաղային բիզնեսի ոլորտներում:Նա հիմնադրել է Tracinda Corporation ներդրումային ընկերությունը, և երկար տարիներ եղել է MGM Studios, MGM Grand և Chrysler Corporation ընկերությունների խոշոր բաժնետեր: Քըրք Քըրքորյանը համարվում է ամերիկյան խոշոր ձեռնարկատերերից և գործարարներից մեկը, որն իր կյանքի ընթացքում գործել է առավելապես փակ և համեստ ոճով՝ հրաժարվելով հանրային ուշադրությունից:Քըրք Քըրքորյանը 1988թ Սպիտակի երկրաշարժից հետո ակտիվորեն ներգրավվեց Հայաստանի աջակցման գործընթացում: 1990-ականներին ստեղծեց «Լինսի» բարեգործական հիմնադրամը, որի միջոցով 2001–2011 թվականներին Հայաստանը ստացավ շուրջ մեկ միլիարդ ԱՄՆ դոլարի աջակցության փաթեթ:

Հիմնադրամի միջոցով իրականացվել են՝

- ՀՀ մի շարք մարզերում և Երևանում ավելի քան 450 կմ ճանապարհների կապիտալ վերակառուցում,
- Ավելի քան 300 դպրոցների և մանկապարտեզների հիմնանորոգում,
- հիվանդանոցների, բուժկետերի, մշակույթի տների վերանորոգում և վերազինում,
- սոցիալական տների կառուցում Ստեփանակերտում՝ արցախյան պատերազմի ընթացքում բնակարանազուրկ մնացածների համար,
- ՀՀ-ում բարձր տեխնոլոգիական սարքավորումների մատակարարում բժշկական և կրթական հաստատություններին:

Քըրք Քըրքորյանը երբեք անձամբ չէր մասնակցում իր անունով որևէ հաստատության բացման արարողություններին, չէր խրախուսում իր անձի հրապարակային գովաբանումը և միշտ գործել է խիստ համեստությամբ: Նա սիմվոլիկ կերպով ընդամենը մեկ անգամ է այցելել Հայաստան:

Մահացել է 2015 թվականի հունիսի 15-ին՝ 98 տարեկան հասակում, ԱՄՆ Լոս Անջելես քաղաքում:

Երևան քաղաքի Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում գտնվող Լենինգրադյան փողոցը մինչև օրս կրում է խորհրդային անցյալը խորհրդանշող անվանում: Նկատի ունենալով, որ անգամ Ռուսաստանի Դաշնությունում արդեն տարիներ շարունակ Լենինգրադ անվանումը որպես

վարչատարածքային միավոր գոյություն չունի (քաղաքն արդեն վերանվանվել է Սանկտ Պետերբուրգ):

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՄՀԵՐ ԲԵՋԱՆՅԱՆ
ՀԱՅԿ ՍԱՀԱԿՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
ԳՈՀԱՐ ԲԱԼԴՐՅԱՆ
ՆԵԼԼԻ ՂԱՐԴՅԱՆ
ԼԻՆԱ ՂՇՅԱՆ